ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

ԹԵՄԱ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում

Կազմեց՝ Արմինե Ղարագյոզյան Վլադիկի
(անուն, ազգանուն, հայրանուն)

<<Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի թիվ 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

ԿԱՊԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. Արժեքային համակարգի ձևավորումը տարրական դպրոցում.....4

2. Արժեհամակարգի ձևավորմանը միտված աշխատանքները մայրենիի դասաժամերին.....8

3. Հետազոտության արդյունքների վերլուծություն 15

Դասի պլան <<Թագավորն ու հողագործը>> հեքիաթը 22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 22

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխգործակցության արդյունք է, որի արդյունավետությունը պայմանավորված է և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների գործունեությամբ, և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի փորձառությամբ: Արժեքային կողմնորոշումները կարևորվում են առաջին հերթին անձի զարգացման տեսանկյունից:

Հասարակական կյանքի արժենորմատիվային ոլորտում առկա տեղաշարժերն առաջ են բերում հանրակրթական նոր խնդիրներ: Կյանքի զարգացումները թելադրում են մանկավարժներին նոր մոտեցումներ հանդես բերել մայրենիի դասավանդման գործընթացում, դրա միջոցով՝ արժեքային վերաբերմունքի ձևավորման նկատմամբ: Կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման բովանդակային և գործնական կողմների քննությամբ էլ պայմանավորված է **թեմայի արդիականությունը:**

Հետազոտության օբյեկտը կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումն է, իսկ առարկան՝ մայրենիի դասընթացը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և հիմնավորել մայրենիի դասընթացում կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման մանկավարժական պայմաններն ու մեթոդական համալիրը:

Հետազոտության նպատակից բխում են **հետևյալ խնդիրները.**

1. սահմանել արժեքները՝ իբրև կրտսեր դպրոցականների գործունեության ու վարքի կողմնորոշումներ,
2. ուսումնասիրել մայրենիի դասագրքերը՝ որպես կրտսեր դպրոցականների արժեհամակարգի հիմք,
3. հետազոտել կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորմանն առնչվող աշխատանքները մայրենիի դասընթացում,
4. իրականացված փորձագիտական հարցումներով պարզել մայրենիի դասագրքի դերը երեխայի արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում:

1. Արժեքային համակարգի ձևավորումը տարրական դպրոցում

Երեխայի դաստիարակության առաջնային խնդիրներից է համապատասխան արժեքային համակարգի ձևավորումը, որն անհնարին է հիմնավորել նյութական և հոգևոր արժեքների միջև տարբերության հստակեցման: Նյութական և հոգևոր արժեքների միջև տարբերությունը պայմանական է, քանի որ ցանկացած նյութական արժեք միայն իր վրա կրում է կրթական, մշակութային, ազգային, կրոնական, պատմական արժեքների կնիքը: Մանկավարժների համար առաջնային խնդիր է դառնում նյութական և հոգևոր արժեքների ձևավորման ռազմավարության մշակումը թե՛ դաստիարակության, թե՛ սոցիալականացման մակարդակներում:

Արժեքները շրջապատող աշխարհի օբյեկտների հատուկ սոցիալական որոշարկումներ են, որոնք բացահայտում են դրանց դրական և բացասական նշանակությունը մարդկանց համար: Արտաքուստ արժեքը հանդես է գալիս որպես առարկայի և երևույթի հատկություն, որը հատուկ է օբյեկտին ներքին կառուցվածքի շնորհիվ, որքանով օբյեկտը ներքաշված է մարդու հասարակական կեցության մեջ՝ դառնալով սոցիալական հարաբերությունների կրող[1]: Արժեքը դառնում է կրտսեր դպրոցականի դաստիարակության ու դպրոցական հարմարման կարևոր առաջմղիչ գործոն[2]:

Ինչպես ողջ աշխարհում, Հայաստանում ևս ներկայումս արժեքային կրթությունը հասարակությանը մտահոգող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական, արժեքային ժառանգությունը փոխանցել գալիք սերնդին՝ նրանց մեջ լավ և կարևոր արժեքներ սերմանելով: Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ այդմ՝ սովորողներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով

[1] Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975, էջ 41-42:
[2]Ценности как основа социализации и воспитания, https://studme.org/1469111324110/pedagogika/tsennosti_kak_osnova_sotsializatsii_vospitaniya.

որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ և ինչպիսի արժեքներ կրել: Նշված երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն: Առաջինը երբեմն զուտ ձևապաշտական բնույթ, երբ լսում են լավ արժեքների՝ ազնվության, արդարության և այլնի մասին, բայց հասարակական միջավայրում հաճախ ականատես լինում արժեքների խախտմանը: Մյուս կողմից էլ նոր մոտեցումը ազատական է, և կարող է վտանգ լինել, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը[3]: Այլ կերպ ասած՝ կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման կարևորությունը բխում է ժամանակակից աշխարհում արժեքների գերակայությունների փոփոխության և հասարակության համար կարևոր արժեքների վերաշարունակման գործընթացներից:

Անձի զարգացումը շատ բարդ և հակասական գործընթաց է, ենթակա է բազմազան ազդեցությունների: Արժեքի կողմնորոշումները բարդ հոգեբանական երևույթներ են, որոնք բնութագրում են անձի կողմնորոշումը, և դրանք նաև անհատական հարաբերությունների համակարգի անբաժանելի մասն են: Արժեքի կողմնորոշումները որոշում են գործողությունները և մարդու վարքը: Անձի արժեքային կողմնորոշման համակարգի ձևավորումը մարդու կյանքի ընթացքում մի շարք փոփոխությունների է ենթարկվում: Արժեքային կողմնորոշումների դինամիկայի հարցը գրավում է հոգեբանների, սոցիոլոգների, մանկավարժների ուշադրությունը և կարևոր, և նշանակալի է ապագա սերունդների հոգևոր զարգացումը որոշելու տեսանկյունից[4]:

Գոյություն ունեն արժեքների տարբեր դասակարգումներ: Արժեքների դասակարգման տեսանկյունից կարևորվում է ոչ միայն հոգևոր, այլև նյութական արժեքների ճիշտ գնահատման, ճանաչման հիմնախնդիրը: Յուրաքանչյուր քաղաքակրթություն ունի իրեն հատուկ սոցիալական, բարոյական, գեղագիտական և

---

[3] Андреева Е.А., Нравственно-правовое воспитание младших школьников: Автореф. дис. на соиск. учен. степ. канд. пед. наук Казан, гос. пед. ун-т. Казань, 2002, с. 5-6: Михайлова Е., Педагогические условия формирования нравственных ценностей у младших школьников во внеурочной деятельности, http://www.dslib.net/obw-pedagogika/pedagogicheskie-uslovija-formirovanija-nravstvennyh-cennostej-u-mladshih-shkolnikov.html:

[4] Формирование ценностных ориентаций младших школьников в процессе взаимодействия семьи и школы, https://works.doklad.ru/view/fRy-dUHq8io.html, Ценности младших школьников, https://cyberleninka.ru/article/n/tsennosti-mladshih-shkolnikov .

այլ ըմբռնումների համակարգեր, որոնք հանդես են գալիս որպես նորմատիվային արժեքներ՝ կողմնորոշելով անհատներին և կարգավորելով նրանց վարքագիծը:

Երեխայի արժեքային համակարգը ձևավորվում է դաստիարակության և սոցիալականացման գործընթացում: Մանկավարժական գործընթացը բնութագրվում է որպես մանկավարժի ու սովորողի, անհատի և սոցիումի գործունեություն, որի ընթացքում սովորողի մեջ տեղի է ունենում դրական փոփոխություն: Ձևավորվում են արժեքային կողմնորոշումներ, խթանվում են նրա դրդապատճառներն ու պահանջմունքները, տեղի է ունենում անձի էության, հոգևոր ներաշխարհի նպատակաուղղված ու հետևողական զարգացում, աշխարհի ճանաչում և բացահայտում:

Մայրենիի դասավանդման գործընթացը տարրական դպրոցում ներառում է երեք ոլորտ.

1. լեզվական գործունեություն՝ բանավոր և գրավոր խոսք, ընթերցանություն, ունկնդրում և այլն,
2. գրական ստեղծագործությունների ուսուցում,
3. մայրենի լեզվի համակարգը:

Երեխայի արժեհամակարգը ձևավորվում է նշված երեք ուղղություններով՝ այդ ոլորտներից յուրաքանչյուրի յուրացմամբ: Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորումն իրականացվում է երեք ուղղությամբ՝ խոսքային գործունեության, գրական տեքստերի շուրջ աշխատանքների և տվյալ լեզվի համակարգի, գիտելիքների յուրացման, հմտությունների և կարողությունների ձևավորման և զարգացման գործընթացում:

Մեծ է մայրենի լեզվի դերը երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում: Լեզուն՝ որպես խոսքային հաղորդակցման միջոց, սովորողներին առնչակից է դարձնում մշակութային ժառանգությանը, հանդես է գալիս որպես շրջապատող աշխարհի ընկալման միջոց: Այս ամենը մի կողմից բարձրացնում է մայրենի լեզվի ուսուցման դերը, մյուս կողմից մանկավարժներին օգնում կիրառել մանկավարժական ներգործության բազմաթիվ միջոցներ կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձավորման ուղղությամբ: Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը ուսումնական գործընթացի

սուբյեկտների ակտիվ փոխներգործության գործընթաց է, որի արդյունքը համամարդկային արժեքների յուրացումն է, գնահատողական վերաբերմունքի և արժեքային կողմնորոշումների ձևավորումը:

Կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխներգործության արդյունքն է, որի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես սովորողների, այնպես էլ ուսուցչի գործունեությամբ:

Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման բովանդակությունը բնութագրվում է կրթական ընդհանուր խնդիրների լուծմամբ: Կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները հնարավորություն չեն ընձեռում ուսումնական գործընթացում ներառելու բոլոր արժեքները: Կարևորվում են հասկացողությանը մատչելի և նրանց կենսափորձից բխող արժեքները: Արժեհամակարգի ձևավորման գործընթացը արտացոլվում է կրտսեր դպրոցականի գործունեության տարբեր ոլորտներում՝ ներառելով ձեռք բերած գիտելիքները, կարողությունները, հմտությունները և աշխարհի նկատմամբ գնահատողական, հուզական վերաբերմունքը:

Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում յուրացվում են հետևյալ արժեքները՝

- գեղագիտական՝ խոսքի գեղեցկության և ներդաշնակության ընկալում, գեղագիտական հույզերի և ապրումների դրսևորում, գեղագիտական ճաշակի ձևավորում,
- բարոյական՝ մարդկանց և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների, երևույթների ու իրադարձությունների համարժեք ընկալում:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցում մայրենի լեզվի ուսուցման ժամանակ սովորողների կողմից յուրացվում են արժեքներ ուսումնական նյութի բովանդակության մեջ՝ նպաստելով նրանց արժեհամակարգի ձևավորմանը: Տարրական դասարաններում, բացի կրտսեր դպրոցականների իմացական ոլորտի, խոսքի, ստեղծագործական կարողությունների զարգացումից, գեղագիտական ճաշակի ձևավորումից, իրականացվում է նաև սովորողների հաղորդակցում ազգային և համամարդկային արժեքներին, որն էլ ձևավորում է նրանց արժեհամակարգը՝

իմացական, սոցիալական, բարոյական, գեղագիտական բաղադրիչներով: Շփման և հաղորդակցության արժեքային կողմը ենթադրում է հասարակությունում դրսևորվելու պահանջմունքը:

2. Արժեհամակարգի ձևավորմանը միտված աշխատանքները մայրենիի դասաժամերին

Մայրենիի դասավանդումը հետապնդում է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծումը՝

- ✓ սովորողների ճիշտ կարդալու, անգիր սովորելու ունակությունների զարգացում և ամրապնդում,
- ✓ սովորողի ինքնուրույն մտածողության զարգացում,
- ✓ ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների զարգացում, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտության ձևավորում,
- ✓ կարդացածը պատմելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու. երկխոսություններ կառուցելու միջոցով բանավոր խոսքի զարգացում,
- ✓ շարադրությունների միջոցով կապակցված խոսք ստեղծելու կարողություն,
- ✓ տեքստի վրա կատարվող գործնական աշխատանքի միջոցով գրվածքի լեզվառճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության զարգացում,
- ✓ տարբեր բնույթի (գեղարվեստական արձակ և չափածո, հրապարա-կախոսական, գիտական և այլն) տեքստերի լեզվառճական վերլուծության միջոցով աշակերտների լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացում,
- ✓ սովորողների բառապաշարի հարստացում,
- ✓ ձևաբանության և շարահյուսության լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորում ու զարգացում:

Մայրենի լեզվի ուսուցման խնդիրներն են՝

- ▪ սովորողի ինքնարտահայտման պահանջմունքի պահպանում ու զարգացում.

- լեզվամտածողության, լեզվազգացողության զարգացում.
- բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ խոսքի, հստակ արտահայտման,
- կարողությունների զարգացում. բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատվական այլ աղբյուրներից,
- օգտվելու հմտության զարգացում,
- ստեղծագործական մտածողության, երևակայության զարգացում,
- վերլուծելու, համադրելու, հակադրելու հմտությունների զարգացում, լեզվական տարրական գիտելիքների յուրացում:

Ելնելով մայրենի լեզվի ուսուցման վերոնշյալ չափորոշիչներից՝ կարելի է նշել, որ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակությունը արտացոլում է այնպիսի արժեքներ, որոնք ընտրված են տարրական դասարաններում ուսուցման գործառույթների և նրանց ուսուցման նպատակների հարաբերակցության հիման վրա՝ հաշվի առնելով սովորողների արժեքակողմնորոշիչ և տարիքային առանձնահատկությունները: Արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ուղղված գործունեության կազմակերպումը չի սահմանափակվում միայն տվյալ դեպքում կրթության բովանդակության մեջ այս կամ այն արժեքի ներմուծմամբ: Այն ենթադրում է մանկավարժական ներգործության ակտիվ ձևերի ու միջոցների օգտագործումը:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման նպատակով կրտսեր դպրոցականի վրա արտաքին ներգործության բազմազանության մեջ առավել հաճախ են առանձնացվում այդ գործընթացի իմացական, ճանաչողական, աֆեկտիվ և վարքային բաղադրատարրերը[5]:

Իմացական բաղադրատարրերը համոզմունքների, պատկերացումների, կարծիքների ամբողջությունն է, որը ձևավորվում է իմացական-ճանաչողական գործընթացների, սոցիալական փորձի արդյունքում: Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի իմացական ճանաչողական, և վարքային բաղադրատարրերը ներառում են արժեքային օբյեկտի հետ կապված հույզերը, ապրումները, զգացումները: Վարքային բաղադրատարրը ներկայացնում է անձի վարքային դրսևորումները, դրդապատճառները, կողմնորոշումները, միտումները:

[5] Непомнящая Н.И., Психодиагностика личности: Теория и практика: Учеб. пособие для студ. высш. учеб. Заведений, М., 2001, с. 73-74.

Քանի որ այս բնութագրիչները միասնական գործընթացի բաղադրիչներ են, դրանք փոխպայմանավորված են և անձի կառուցվածքում կայուն հարաբերակցության են ձգտում[6]: Բաղադրատարրերից մեկի փոփոխությունը կարող է հանգեցնել անձի արժեքային ողջ համակարգի փոփոխության:

Ըստ Ս. Ի. Մասլովի կրտսեր դպրոցականների կողմից արժեքների յուրացումն իրականանում է երեք աստիճաններով.

1. առաջին աստիճանը կապված է օբյեկտի հուզական ընկալման հետ. սկզբում երեխան ցանկացած օբյեկտ ընկալում է հուզականորեն՝ իր հուզական-զգայական ոլորտի մակարդակի համեմատ,

2. երկրորդ աստիճանը կապված է ընկալվող օբյեկտի անձնական և հասարակական նշանակության գիտակցման հետ,

3. երրորդ աստիճանում իրականանում է կրտսեր դպրոցականի արժեքային կողմնորոշումների մեջ արժեքի ներմուծման, այլ արժեքների հետ նրա հարաբերակցության միջոցով՝ ըստ հուզական անդրադարձի և անձի համար արժեքի նշանակության աստիճանի:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցականների կողմից արժեքների հուզական ընկալումն իրականանում է ըստ դրանց նշանակության գիտակցման և անձի վարքային դրսևորումների:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման այսօրինակ հետևողականության և տրամաբանության համաձայն՝ Ս. Մասլովի կողմից առաջարկվում է տարրական կրթության բովանդակության հուզականարժեքային բաղադրատարրերի յուրացման ընդհանուր դիդակտիկական մեթոդների այսպիսի համակարգ.

- ✓ համարժեք հույզերի մեթոդ,
- ✓ հույզերի և արժեքների շեշտադրման մեթոդ,
- ✓ հուզական-արժեքային հակադրությունների մեթոդ: Համարժեք հույզերի մեթոդն այն է, որ կրտսեր դպրոցականներին մղում է ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ հուզական անդրադարձի և ճանաչողական գործունեության: Այն թույլ է

[6] Վարդումյան Ս., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ. ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, 2005, էջ 157-158:

տալիս արժեքային կողմնորոշումների ձևավորումն իրականացնել դրանց յուրացման առաջին աստիճանում[7]:

Հուզական-արժեքային հակադրությունների մեթոդի կիրառումը սովորողներին մղում է արժեքների յուրացման երրորդ աստիճանին: Այս մեթոդի էությունն այն է, որ հակադիր արժեքների ցուցադրմամբ սովորողների մեջ համապատասխան հակադիր զգացումներ ձևավորվեն: Դրա շնորհիվ երեխաների մեջ արթնանում են հույզերի, զգացմունքների և դրական արժեքների գիտակցման համոզմունքներ, ապրումներ, որոնք և ձևավորում են անձի արժեքային կողմնորոշումների համակարգը: Կրտսեր դպրոցականների կողմից արժեքային կողմնորոշումների յուրացման այսօրինակ մոտեցումը նպաստում է արժեքային ընտրության առավել գիտակցված և ինքնուրույն իրականացմանը:

Ընտրությունը փոխադարձ բարդ համագործակցային գործընթաց է, որում առկա են հուզականային և ռացիոնալ բաղադրատարրերը, այսինքն արարքի հուզական ընկալումից մինչև տրամաբանական իմաստավորում: Դա կապակցված է ապրումների ու դրդապատճառների պայքարի հետ և բարենպաստ ազդեցություն ունի արժեքային կողմնորոշումների ավելի խոր ու արդյունավետ ձևավորման վրա[8]: Տարրական ուսուցման ընթացքում նշված մեթոդներն կիրառվում են՝ հաշվի առնելով առարկաների յուրահատկությունները: Դրանցում առկա նյութում հուզական անդրադարձը և արժեքային շեշտադրումները կարող են արտահայտվել երկակիորեն. նախ ինքնին ազգային մշակույթի արտահայտման ձև է, երկրորդ՝ դա այն աշխարհն է, որը շրջապատում է մեզ իր ողջ բարդությամբ, կապերով ու փոխհարաբերություններով: Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակությունն ենթադրում է այնպիսի արժեքների ամբողջություն, որոնք ընտրված են տարրական դպրոցում ուսուցման նպատակների, կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների և նրանց արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունների համադրման հիման վրա:

---

[7] Маслов С.И., Эмоционально-ценностное образование младших школьников /С.И. Маслов, Тула, Изд-во ТГПУ им. Л.Н. Толстого, 1999, с. 154-155.

[8] Страницы современной педагогики: диалог теории и практики (под ред. С.М. Годника)- Воронеж: ВОНПКРО, 1998, с. 97-98.

Կրտսեր դպրոցականի արժեհամակարգը միանգամից չի ձևավորվում: Մայրենիի դասագրքում առկա յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրումը նպաստում է արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ու զարգացմանը: Լեզվի ուսուցումը միակողմանի գործընթաց չէ. այն հնարավորություն է տալիս կուտակված արժեքներն ու կողմնորոշումները փոխանցելու գալիք սերունդներին[9]:

Թեմատիկ տեքստերի ուսուցումը իրականացվում է մեթոդական հետևյալ քայլաշարով.

ա) թեմայի քննարկում սովորողների հետ,

բ) համապատասխան բառապաշարի համալրում, հենակետային բառերի ուսուցանում,

գ) բնագրի բանավոր շարադրում (բոլոր սովորողների ակտիվ մասնակցությամբ),

դ) բառային աշխատանք (ուղղագրական և իմաստային արժեքների դիտարկում):


Ճուտիկին և գորտին՝ ըստ գծապատկերի.

հատկանիշ	+	առարկա	=	բառակապակցություն

Օրինակ՝ դեղին + ճուտիկ = դեղին ճուտիկ,
կանաչ + գորտ = կանաչ գորտ:
Ո՞ր բառերը դուրս մնացին: Դրանցով կազմիր այլ բառակապակցություններ:

49

ՁՐՈՒՅՑ ՀԵՌԱԽՈՍՈՎ
Լևոն Միրիքանյան

Զանգ տվեցի մի օր մեր տուն,
Լսափողը վերցրեց կատուն:
– Ի՞նչ կա, Փիսի՛կ, ի՞նչ ես անում:
– Մուկ եմ տեսել ես մառանում*,
Այնտեղ պիտի այնքան մնամ,
Մինչև բռնեմ, հանգստանամ:
– Շա՛տ լավ, Փիսի՛կ, գործի՛դ գնա,
Շնիկն ո՞ւր է, թող մոտենա:
Շունը եկավ.
– Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ...
– Ի՞նչ կա, Շնի՛կ, ի՞նչ ես հաչում:
Քո տիրոջը չե՞ս ճանաչում:
– Մարդ կա բակում, մի՛ խանգարիր,
Հաչեմ, պրծնեմ, զանգահարի՛ր...
Ես, ինձ վրա խիստ բարկացած,
Լսափողը դրեցի ցած.
«Ի՞նչ եմ նրանց ես խանգարում,
Ո՞վ կա պարապ այս աշխարհում,
Թե՛ մարդ լինի, թե՛ կենդանի՝
Ամեն մեկը իր գործն ունի»:

Հարցեր
1. Ինչո՞վ էր զբաղված Փիսիկը:
2. Ինչ պատասխանեց Շնիկը:

2 Ուրիշ ո՞ւմ է զանգահարել տղան նկարում: Դերային խաղով ներկայացրեք երկխոսությունը:

3. Քո կարծիքով՝ կարելի՞ է հեռախոսով շատախոսել:
4. Ինչպե՞ս ես հասկանում «Ո՞վ կա պարապ այս աշխարհում» տողը: Իսկ ո՞րն է քո աշխատանքը:

1 Արագ, սրտաճմլիկ, բարձրաձայն, համաչափ, սիրալիր, հոնգուր-հոնգուր, դանդաղ, գլխապատառ, ցածրաձայն, մաշված հատկանիշ ցույց տվող բառերը վերագրի՛ր գործողություն ցույց տվող վազել և լացել բառերին՝ ըստ գծապատկերի:

հատկանիշ	+	գործողություն	=	բառակապակցություն

Օրինակ՝ համաչափ + վազել = համաչափ վազել,
սրտաճմլիկ + լացել = սրտաճմլիկ լացել:
Ո՞ր բառերը դուրս մնացին: Դրանցով կազմիր այլ բառակապակցություններ:

[9] Романовская З. И., Чтение и развитие младших школьников, М., 1992, с. 28-35.

Յուրաքանչյուր թեմայի շրջանակում պետք է հատվածաբար սովորողներին պատմել տալ դասագրքում առկա տեքստերը, առավել ևս նրանց հարցեր տալ, ինչպես նաև օգնող բացատրություններ: Որքան էլ որ տեքստերը պատմելիս տեղ տրվի երեխաների ստեղծագործական մտքին և վերլուծական մտածողությանը, այնուամենայնիվ, սովորողները պետք է տրված խոսքի նմուշից օգտագործեն այն բառերը, արտահայտությունները, որոնք իրենց հանդիպում են առաջին անգամ, որպեսզի պահպանվեն ստեղծագործության իմաստային առանձնահատկությունները, և սովորողների խոսքը հարստանա դրանցով: Ընթերցած նյութի պատմելը կամ վերարտադրելը առարկաների կատարած գործողությունների, ընթերցած ստեղծագործության գործող անձանց արարքների, նրանց գործունեության մասին որոշակի հաջորդականությամբ հաղորդումն է: Ստեղծագործությունների ընթերցումը, վերարտադրումը, վերլուծումը հանդես են գալիս որպես խոսքի զարգացման կարևոր բաղադրիչ.

- Ստեղծագործությունը պատմողին պիտի հուշի՝ ո՞ւմ կամ ինչի՞ մասին պիտի պատմի և ներկայացնի, թե ի՞նչ է տեղի ունենում (ունեցել):
- Նկարի վերարտադրության ժամանակ հենակետային բառերն ընտրելու կարողության ձևավորման ժամանակ ուսուցիչը պիտի նկատի ունենա, որ պատմումը պահանջում է սահմանական եղանակի շարժման բայեր, որոնք ցույց են տալիս գործողության արդյունք:
- Պատմելու ժամանակ կիրառվում են մի անգամ, օրերից մի օր, այդ ժամանակ, հանկարծ, անսպասելի, այդ օրերին, դրա հետևից, հենց որ և նման այլ բառեր և արտահայտություններ:

Տարբեր առաջադրանքների միջոցով պատմելու կարողության ձևավորումը նպաստում է նկարագրական խոսքի զարգացմանը: Նկարագրությունն առարկայի (երևույթի) համալիր հատկանիշների մասին միաժամանակյա հաղորդումն է: Առարկայի, մարդու, երևույթի, տեսարանի հատկանիշները կարելի է ներկայացնել՝ պայմանավորված խոսողի հետապնդած նպատակներով, ինչ նպատակ է հետապնդում, ինչն է կարևորում, հատկապես որ հատկանիշի վրա է կամենում հրավիրել ունկնդրի (ընթերցողի) ուշադրությունը: Նկարագրական խոսքը ներառում է.

- առարկայի կամ մարդու ընդհանրացված գնահատումը,
- առարկայի կամ մարդու նկարագրությունը,
- առարկայի կամ մարդու էական, կոնկրետ հատկանիշները,
- առարկայի, կամ մարդու դերը, նշանակությունը նկարագրողի համար:

Դատողական խոսքն ունի հետևյալ կառուցվածքը՝ ապացուցվելիք փաստը ներկայացնող խոսք, ներկայացնող խոսք, եզրակացություն, գնահատում: Դիտելով մեզ շրջափակող իրականությունը՝ մենք հաճախ գնահատում ենք առարկայի, մարդու գործողությունը, միջավայրի վիճակը, մարդկանց արտաքինը, վարքը և այլն: Գնահատումը սուբյեկտիվ խոսք է: Այն ձևավորվում է տարաբնույթ զգացմունքային-արտահայտչական և քերականական միջոցներով, որոնք օգնում են սովորողին հասկանալ խոսքը:

Բոլոր տեսակի քայլերի դեպքում, որոնք ընկած են սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմքում, պետք է հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, հաջորդայնության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները[10]:

Մայրենիի դասավանդման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորմանը նպաստում են միջառարկայական և ներառարկայական կապերը: Մայրենի լեզվի դասերին միջառարկայական կապերի գործադրման երեք կարևոր, միմյանց չկրկնող և չբացառող ձևեր կամ եղանակներ կան: Այդ ձևերից առաջինը ուսումնական գործընթացում ներառարկայական կապերի ճիշտ կիրառումն է: Այն, ինչ սովորողներն անցել են նախորդ դասին կամ դասերին, հետևողականորեն պիտի կրկնվի, ամրապնդվի, դառնա կարողություն, հիմք ծառայի նորի յուրացման համար և կապվի նորի հետ: Սա ուսուցման գործընթացի գիտական կազմակերպման նոր պահանջ է և հետևողականորեն պետք է պահպանվի մայրենի լեզվի բոլոր դասերի ընթացքում: Սովորողներն առաջին օգնությունը կարող են և պիտի ստանան դաընթացից վերցրած այն գիտելիքներից, փորձից ու լեզվական ընդհանուր պաշարից, որը նրանք կուտակել են տարիների ընթացքում, և որը պետք է գործողության մեջ դնել, վերհիշել, կապել նորի հետ, լրացնել ու ամբողջացնել նախկինում ձեռք բերածը:

[10] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 42:

Միջառարկայական կապերի կիրառման մյուս եղանակը, որի գործածումը ևս կարևոր է մայրենի լեզվի դասերին, ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն է: Սա նույնպես սովորողի ունեցածի, ձեռք բերածի և կուտակածի նպատակահարմար և արդյունավետ օգտագործման պահանջն է՝ գիտելիքների և կարողությունների գիտելիքների և կարողությունների բնագավառում: Այնպես, ինչպես ամեն դասարանում սովորողին գրել-կարդալ չենք սովորեցնում, որովհետև առաջին դասարանում սովորել է, այդ կարողություններն ունի, և դրանք վստահորեն պետք է օգտագործել ուսուցման գործընթացում, այնպես էլ բազմաթիվ գիտելիքներ ու կարողություններ, որոնք ձեռք է բերել առաջ, հմտորեն պետք է կիրառել ուսուցման գործընթացում ընդհանրապես և մայրենի լեզվի դասերին մասնավորապես: Գիտելիքների և կարողությունների այսպիսի փոխանցումը և օգտագործումը պետք է դիտել որպես միջառարկայական կապերի կիրառության կարևոր ձևերից մեկը և վստահորեն կիրառել տարրական դասարանների մայրենի լեզվի դասերին՝ հավատացած լինելով, որ այն մեծ օգուտ կարող է տալ ինչպես ճանաչողական, այնպես էլ դաստիարակչական և արժեհամակարգի ձևավորման առումներով:

3 Հետազոտության արդյունքների վերլուծություն

Հետազոտությունն անցկացրել եմ միջնակարգ դպրոցի տարրական դասարաններում սովորող 3-4-րդ դասարանների 16 սովորողների շրջանում: Հարցաթերթիկում ընդգրկված էր 9 հարց, որի շուրջ պետք է ներկայացնեին իրենց կարծիքները:

Տարրական դասարանների սովորողների և ուսուցիչների հետ անցկացրել եք փորձագիտական հարցումներ: Ժամանակակից զարգացող հասարակության մեջ ավելի ու ավելի դժվար է դարձել սովորողներին ստիպել գիրք կարդալ, այնուհանդերձ, գրքի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում մնում է անփոխարինելի: Աշխարհն արագորեն փոփոխվում է, դառնում ավելի ու ավելի շատ վիրտուալ, այդ պատճառով ընթերցանության խթանման ձևերը նույնպես պիտի փոխվեն և համապատասխանեն ժամանակի պահանջներին:

Հիմք ընդունելով մայրենիի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի գիտելիքների ձեռքբերման և արժեհամակարգի ձևավորման կարևորության վերաբերյալ առկա մոտեցումները՝ փորձել ենք տարրական դասարանների ուսուցիչների շրջանում հարցաթերթիկի միջոցով պարզել, թե որքանով են սովորողները սիրում մայրենիի դասագիրքը, այն պարտադրանք է, թե հաճելի զբաղմունք, ինչպես նաև ինչն է նրանց գրավում դեպի ընթերցանությունը: Հարցման ենթակա 10 ուսուցիչներից 8-ը, հակառակ սովորողների, հարցաթերթիկի 1-ին հարցին պատասխանել է, որ մայրենիի դասագիրքը կարդալը սովորողների համար պարտադրանք է, իսկ 2-ը նշել է, որ ցանկալի զբաղմունք է:



Ինչո՞ւ են ուսուցիչները պարտադրում գիրք կարդալ, քանի որ այն ունի իր կարևոր և դրական կողմերը: Ընթերցանությունը զարգացնում է մտածողությունը: Կարդալիս շատ են մտածում՝ փորձելով հասկանալ այս կամ այն իրավիճակը, հերոսի հոգեվիճակը: Կարդալու ընթացքում միշտ պատկերացնում են մի շարք մանրամասներ՝ հերոսներին, նրանց հագուստները, նրանց շրջապատող յուրաքանչյուր իր: Այս ամենը ամրապնդում է նաև հիշողությունը, մարզում ուղեղը: Գիրք կարդալը զարգացնում է նաև բառապաշարը: Գրքում առկա են լինում մի շարք ծանոթ և անծանոթ բառեր, որոնք ուզած-չուզած ընդգրկվում են նրանց բառապաշարի մեջ: Եվ առօրյա խոսքում անգամ օգտագործում են դրանք: Ինչպես նաև գիրք կարդալը զարգացնում է երևակայությունը: Ովքեր շատ գրքեր են կարդում, ապա նրանք լավ շարադրություններ են գրում: Որքան շատ բան գրքերի շնորհիվ տեղավորվի նրանց գլխում, այնքան հեռու կթռչի նրանց երևակայությունը:

Հարցաթերթիկում ընդգրկված մյուս հարցում ուսուցիչները պետք է ներկայացնեին մայրենիի դասագրքի նկարազարդումներից սովորողների ստացած տպավորությունները: Հարցվող բոլոր ուսուցիչներն էլ նշել էին, որ սովորողներին

միշտ էլ գրավում են գեղեցիկ պատկերներն ու նկարազարդումները: Ըստ ուսուցիչների, սովորողները մեծ հետաքրքրությամբ են այն ուսումնասիրել:

Իսկ հարցաթերթիկի հաջորդ հարցը վերաբերում էր դասագրքի ձևին ու չափին: Նրանցից 7-ը նշել էին, որ սովորողներին դուր էր եկել այն, քանի որ իրենց դասագրքերից տարբերվում է, 3-ը նշել են, որ առանձնապես չոգևորեց նրանց:

Հարցաթերթիկում ընդգրկված մյուս հարցով նպատակ ունեինք պարզելու, թե ուսուցիչներն ի՞նչ կարծիք ունեին դասագրքում առկա տեղեկատվական բազմաբնույթ նյութերի մասին: Եվ արդյո՞ք դրանք հետաքրքրում են սովորողներին: Բոլոր ուսուցիչներն էլ նշել էին, որ նպատակային է տեղեկատվությունը և տեղին է արված: Նույնիսկ իրենց համար էր անհրաժեշտ: Քանի որ կարողացան հետաքրքիր տեղեկություններ հաղորդել սովորողներին՝ նպաստելով նրանց արժեհամակարգի ձևավորմանը: սովորողներին ևս հետաքրքիր էր:

Հարցաթերթիկում ընդգրկված մյուս հարցերի նպատակն էր հասկանալ, թե ինչպիսի՞ զգացողություններ են ունենում սովորողները մայրենիի դասագրքում զետեղված գեղարվեստական ստեղծագործությունները ընկերների հետ ընթերցելիս: 8 ուսուցիչ նշել էր, որ սովորողները սիրում են քննարկումներով ընթերցանությունը, քանի որ դասարանում կարողանում են կարծիքներ փոխանակել և կիսվել իրենց տպավորություններով: Իրենց համար մենակ ընթերցելը ձանձրալի է և անհետաքրքիր: Այդ պատճառով տանը հանձնարարված ընթերցանությունը համարվում է նրանց համար պարտադրանք: Միայն 2 ուսուցիչ էր նշել, որ կան սովորողներ, որոնք սիրում են մենակ ընթերցել, քանի որ այդպես իրենց խանգարող չի լինում:

Ինչևէ, սովորողները գիրք կկարդան մենակ կամ ընկերներների հետ, կարևորն այն է, որ սիրեն գիրքը և ընթերցանությունը, քանի որ ինչքան շատ են սովորողները կարդում, այնքան նրանց բառապաշարը հարստանում է և դրան զուգահեռ զարգանում են նրանց իմացական կարողությունները: Վաղ տարիքում զարգացած կարդալու հմտությունները կապված են հետագայում բարձր ինտելեկտի հետ:

Հարցաթերթիկում տեղ գտած հաջորդ հարցը հետևյալն էր, թե հեքիաթը մենակ ընթերցելը տալիս է սովորողին հնարավորություն իր տպավորությունները կիսելու ինչ-որ մեկի (ընկեր, քույր, եղբայր) հետ: Հարցվածների զգալի մասը նշել են, որ տանը

հանձնարարված ընթերցանությունը ինքնըստինքյան ենթադրում է մենակ ընթերցանություն, թե այդպես սովորողները որքանո՞վ են հաղորդակից դարձնում իրենց ընկերներին, քրոջը կամ եղբորը, դժվարանում են պատասխանել:

Հարցաթերթիկում ներառված հաջորդ հարցի միջոցով փորձեցի բացահայտել, թե սովորողները դասագրքում զետեղված հեքիաթ-վիպակներից ներկայացված հատվածները կարդալուց հետո ցանկություն ունենու՞մ են ամբողջը կարդալու, թե բավարարվում են այդքանով: Վեց ուսուցիչ նշել էր, որ հետաքրքրասեր և ընթերցասեր սովորողը միշտ էլ պրպտումների մեջ է լինում, իհարկե նման սովորողները ցանկություն ունենում են ամբողջը կարդալու: Չորս ուսուցիչ էլ նշել էր, որ սովորողները բավարարվում են այդքանով: Ծուլանում են և չեն ցանկանում շատ ընթերցել:

Գիրք կարդալը կարելի է համեմատել սպորտով զբաղվելու հետ: Ինչպես որ մարզվելիս մկաններն անընդհատ աշխատում են և ավելի են ուժեղանում, այնպես էլ գիրք կարդալիս մարզվում է ուղեղը՝ հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը:

Եվ հարցաթերթիկի վերջին հարցը վերաբերում էր նրան, թե մայրենիի դասագրքերում առկա ստեղծագործությունները, առաջադրանքները նպաստու՞մ են սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորմանը և զարգացմանը: Տասը ուսուցիչներն էլ նշել էին, որ դրանք նպաստում են ինչպես սովորողի խոսքի զարգացմանը և բառապաշարի ընդլայնմանը, այնպես էլ մտածողության զարգացմանը: Գրքի ընթերցանությունը հարստացնում է սովորողի լեզուն շատ առավել բարդ և բազմազան բառերով, քան այն բառերը, որոնք իրենք օգտագործում են առօրյա կյանքում: Այդ իսկ պատճառով ընթերցանությունն ունի իր դրական կողմերը: Որքան սովորողը շատ է կարդում, այնքան նա լավ կարողանում է և՛ շարադրություններ գրել, և՛ հեքիաթներ, և՛ փոքրիկ պատմվածքներ և թե բանաստեղծություններ: Ընթերցանությունը զարգացնում է նաև երևակայությունը, ինչն էլ նպաստում է նաև արժեհամակարգի ձևավորմանը:

Այսպիսով՝ կատարված հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ մայրենիի դասագիրքը զարգացնում է կրտսեր դպրոցականի խոսքի մշակույթը, բարձրացնում է ճանաչողության մակարդակը, փոխում է նրա աշխարհայացքը և

ցանկություններն ավելի տրամաբանական է դարձնում: Ով ընթերցանությամբ է զբաղվում ավելի լավ է կարողանում լուծել խնդիրները: Արդյունքում բարձրանում է հասարակության մշակույթի մակարդակը և երաշխավորվում է հասարակության առողջությունն ու անվտանգությունը, ձևավորվում է կրտսեր դպրոցականների արժեհամակարգը:

Հարցաթերթիկում ընդգրկված 1-ին հարցին, ի զարմանս ինձ, 16 սովորողն էլ նշել էին, որ իրենց համար գիրք կարդալը և իրենց դասագիրքը բացելը ցանկալի, հաճելի զբաղմունք է և ոչ թե պարտադրանք:

Հարցաթերթիկի առաջին հարցից ստացվող արդյունքների վերլուծությունից ստացված արդյունքները.

Սովորողներից փորձեցի պարզել, թե ի՞նչը կարող է գրավել իրենց դեպի գիրքը: Այսինքն՝ գունազարդ կազմը և գեղեցիկ նկարները կարո՞ղ են խթանել, որ սովորողները սկսեն այն ընթերցել: Սովորողներին շատ է դուր գալիս դասագրքի նկարազարդումները, որոշների համար նկարները գեղեցիկ են, զվարճալի և հետաքրքիր: Երկու սովորող էլ նշել է, որ իրենց շատ գրավեց գիրքը և իրենց մեջ ցանկություն առաջացավ այն ընթերցելու: Սովորողները նշեցին, որ իրենք տպավորված են գրքի չափից և ձևից:

Ընդհանրացնելով այս երկու հարցերի շուրջ սովորողների եղած տպավորությունները, պարզ է դառնում, որ սովորողների զգալի մասին դուր են գալիս իրենց դասագրքերի նման գունազարդ և նկարներով հարուստ գրքերը:

Հարցաթերթիկում ընդգրկված մյուս հարցում սովորողները պետք է ներկայացնեին, թե արդյոք իրենց հետաքրքրեց տարբեր թեմաների մասին տեղեկությունները: Սովորողների զգալի մասի համար այնքան հետաքրքիր էր, իսկ

նրանցից չորսը գտնում էին, որ իրենք ծանոթացան իրենց համար անծանոթ հեղինակների հետ և հետաքրքիր տեղեկություններ ստացան վերջիններիս մասին:

Հարցաթերթիկում ընդգրկված մյուս հարցով նպատակ ունեի պարզելու, թե սովորողները ի՞նչ զգացողություններ են ունենում դասագրքերում զետեղված տարբեր թեմաներով ստեղծագործությունները իրենց ընկերների հետ կարդալիս: Հարցմանը մասնակցած սովորողներից վեցը գտնում էին, որ ընկերների հետ ընթերցելը հաճելի է, չորսը գտնում էին, որ շատ ուրախ է լինում և զվարճալի: Վեց հարցվող էլ նշել է, որ միասին ընթերցելը հետաքրքիր է անցնում, քանի որ կարողանում են միասին խորհրդակցել և կարծիքներ փոխանակել:

Հաջորդ հարցն ուղղված էր, թե ի՞նչ զգացողություն են ունենում դասագիրքը մենակ թերթելիս կամ ընթերցելիս: Հարցվողներից վեցը նշել են, որ չեն սիրում մենակ ընթերցել, այլ՝ ընկերների կամ որև՝ մեկի հետ, քանի որ այդպես չեն կարողանում իրենց տպավորություններով կիսվել: Չորսն էլ նշել են, որ մենակ ընթերցելը ձանձրալի է և շատ տխուր, քանի որ ցանկությունն են ունենում իրենց տպավորությունները ընկերոջ, քրոջ, եղբոր կամ որևէ մեկի հետ կիսելու: Հինգ սովորող էլ նշել է, որ շատ անհետաքրքիր է լինում և չեն ցանկանում շարունակել ընթերցանությունը: Միայն մեկ սովորող է նշել, որ իրեն շատ է դուր գալիս մենակ ընթերցելը, քանի որ այդպես իրեն խանգարող չկա և ավելի հետաքրքիր է անցնում:

Ինչևիցե, ամփոփելով այս երկու հարցերի պատասխանները, հանգեցի այն եզրակացությանը, որ սովորողները, մայրենիի դասագրքի թեմաների և ստացած գիտելիքների շրջանակում, սիրում են ակտիվ քննարկումներ և բանավեճեր: Պետք է նշել, որ հարցմանը մասնակից սովորողներից յուրաքնչյուրն էլ գիտակցում է, որ ընթերցանությունը նպաստում է իրենց գիտելիքների զարգացմանն ու հարստացմանը: Եվ նշել են, որ սիրով են ընթերցում:

Հարցաթերթիկի վերջին հարցը այն մասին է, թե արդյո՞ք երեխաները դասագրքում ընդգրկված ստեղծագործությունների ընթերցումից հետո ցանկություն ունենո՞ւմ են ստեղծագործելու՝ հեքիաթներ, բանաստեղծություններ և փոքրիկ պատմվածքներ գրելու (նկարելու): 5 աշակերտ նշել է, որ շատ է ցանկանում հեքիաթ գրել, 2 աշակերտ՝ պատմվածք, 4-ը՝ նկարելու, 2-ը՝ բանաստեղծություն գրելու: Միայն 3 աշակերտ է նշել, որ իրենց մոտ ստեղծագործելու ոչ մի ցանկություն չի առաջանում:

Ընդհանրացնելով հարցի վերաբերյալ նշված պատասխանները՝ կարող եմ փաստել, որ մայրենիի դասագիրքը նպաստում է այնպիսի կարողությունների ու հմտությունների, արժեքային կողմնորոշումների ձևավորմանը, որոնք ապահովում են բազմակողմանի զարգացած, ստեղծագործող, բանիմաց, մտածող սովորողի ձևավորումը: Գիրք կարդալը մեծ հնարավորություն է ընձեռում դպրոցականի բառապաշարի հարստացման համար: Դա արտահայտվում է նրա գրավոր և բանավոր խոսքի մեջ, զրույցներում, գրավոր աշխատանքի տարբեր տեսակներում:

Ինչպես պարզ դարձավ հարցաթերթիկների վերլուծություններից, աշակերտներին գրավում են նաև գրքի ձևն ու չափը, նկարազարդումներն ու պատկերները: Նրանք նշեցին, որ դրանք գրավում են, որպեսզի իրենք կարդան այդ գիրքը: Դասագիրքն ազդում է մարդու մտավոր զարգացման վրա, իսկ ընթերցանության նկատմամբ սեր երեխաների մոտ պետք է արթնացնել դեռևս վաղ տարիքից՝ հեքիաթներ և այլ ստեղծագործություններ կարդալով: Երեխաները կրկնօրինակում են մեծերին, այսինքն պետք չէ երեխային պարտադրել, որ նա կարդա, բավական է միայն երեխան տեսնի, որ ծնողը, ուսուցիչը կարդում են: Այժմ երեխաներն ավելի հեշտ են տեղեկություն ստանում համացանցից, որի հետևանքով մարում է սերը գրքի և ընթերցանության նկատմամբ: Որքան համացանցի հնարավորությունները մեծ են, այնքան էլ վտանգավոր են սխալ օգտվելու դեպքում, այդ իսկ պատճառով գիրքն անփոխարինելի է:

Դասի պլան

Արմինե Ղարագյոզյան

Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի դասվար

Առարկան՝ Մայրենի /3-րդ դասարան/

Դասի թեման՝ Սողոմոն Մկրտչյան <<Թագավորն ու հողագործը>>

Դասի տիպը՝ Նոր նյութի յուրացման դաս

Դասի նպատակը՝

- Զարգացնել հաղորդակցական և համագործակցային կարողությունները
- Ամրակայել ստեղծագործական հմտությունները

Վերջնարդյունքները՝

- Հասկանալով, արտահայտիչ ընթերցի տեքստը, պատասխանի հարցերին:
- Համեմատի ու հակադրի հերոսներին ու նրանց գործողությունները, բացատրի՝ ինչպես են դրանք ազդում տեքստի իրադարձությունների ընթացքի վրա:
- Արտահայտի մտքերն ու զգացմունքները՝ կիրառելով ինքնաարտահայտման տարբեր ձևեր:
- Հասկանա հերոսների պահվածքի դրդապատճառները, դրսևորի համապատասխան վարքագիծ:
- Ընկալի գեղարվեստական ստեղծագործության տրամաբանական և զգայական միասնությունը:
- Մասնակցի քննարկումների, բանավեճերի, լսի և հասկանա արտահայտած մտքերը, ներկայացնի մոտեցումներ:
- Հասկանա և գնահատի խոսքի արժեքը, բարի գործ կատարելու անհրաժեշտությունը և դրսևորի հոգատար վերաբերմունք մարդու և բնության նկատմամբ:

Կահավորում և ուսումնական նյութեր՝ դասագիրք, աշխատանքային տետր, սահիկաշար:

Գնահատում՝ ձևավորող գնահատման գործիքներով

Դասի ընթացքը

Խթանում

ա/ Էկրանին գրված հանելուկը երեխաները փորձում են կռահել:Այնուհետև կարդում են հարցերը և պատասխանում: Կազմակերպվում է քննարկում, աշակերտներն

արտահայտում են իրենց կարծիքները առաջադրված թեմայի վերաբերյալ:/հավելված 1,2/

բ/ աշակերտներից մեկը բարձրաձայն ընթերցում է նախապատրաստական ուղերձը: /հավելված 3/

Իմաստի ընկալում

1. Տեքստը նախօրոք բաժանվել է հատվածների: Յուրաքանչյուր հատվածի ընթերցանությունից հետո աշակերտներին տրվում են հարցեր ինչպես ընթերցածի շուրջ դատողություններ կատարելու, այնպես էլ հաջորդ հատվածի դեպքերի հաջորդականությունը կռահելու նպատակով: /հավելված 4-9/
2. Աշակերտներին տրվում է ժամանակ եզրահանգումներ կատարելու, մտքեր արտահայտելու և կանխագուշակումներ կատարելու համար:
3. Վերջում տրվում են ամփոփիչ հարցեր բնագրի ամբողջական ընակլման մակարդակը բացահայտելու նպատակով:

Լեզվատրամաբանական առաջադրանքներ

1. Նկարագրել բնագրի գլխավոր հերոսներին՝ տրված բառաշարքերից ընտրելով համապատասխան բառերը: /հավելված 10,11/

2.Բնագրի նորածանոթ բառերի մեկնաբանություն; /հավելված 12/

3. Մեկնաբանել դարձվածքները /Հավելված 13/

4.Կազմել բարդ բառեր /Հավելված 14/

Կշռադատում

Առածի իմաստի մեկնաբանություն՝ բնագրի հիմնական գաղափարի վերհանում:/հավելված 15/

Տնային հանձնարարություն

Սովորել բնագիրը վարժ կարդալ, պատմել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը մայրենիի դասագրքերի նյութերի ուսումնասիրման միջոցով բերում է հետևյալ եզրակացություններին:

1. Կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը, պայմանավորված տվյալ տարիքի երեխաների զարգացման առանձնահատկություններով, որոշակի պահանջներ է առաջադրում նրանց արժեկողմնորոշիչ հմտությունների ձևավորման առումով: Երեխաները ձեռք են բերում գիտելիքներ, հմտություններ, ինչպես նաև որոշակի վերաբերմունք, արժեքներ շրջակա աշխարհի, անգամ իրենց ընտանիքի նկատմամբ: Նրանց արժեհամակարգը ձևավորվում է ուսուցանվող նյութերի, նաև ուսուցչի նպատակային գործունեության շնորհիվ:
2. Մայրենիի դասընթացը դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորված դասընթաց է, որն իրականանում է կրթության մատչելիության, հաջորդականության, շարունակականության ապահովմամբ՝ հաշվի առնելով երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Մայրենիի դասընթացում կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման արդյունավետ մոդելը ներառում է գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցում, վերլուծում, թեմատիկ զրույցների իրականացում, բազմատեսակ առաջադրանքների կատարում և այլն, որոնք, լեզվի բառապաշարի, քերականական և արտահայտչական միջոցների տիրապետումից բացի, աշակերտների մոտ ձևավորում են անձնային, հաղորդակցական, ինքնագնահատման կարողություններ, խոսքի մշակույթի զարգացում և այլն:
3. Իրականացված փորձագիտական հարցումը ցույց տվեց, որ մայրենիի դասագիրքը կրտսեր դպրոցականների արժեհամակարգի կարևոր հիմք է, պարզապես նշված համատեքստում կարևոր են մանկավարժական պայմանները, ուսուցիչների կողմից կիրառվող մեթոդական քայլաշարերն ու աշակերտների վերաբերմունքային պատասխանատվության գործոնները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
2. Վարդումյան Ս., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ. ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, 2005:
3. Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975:
4. Андреева Е.А., Нравственно-правовое воспитание младших школьников: Автореф. дис. на соиск. учен. степ. канд. пед. наук Казан, гос. пед. ун-т. Казань, 2002:
5. Непомнящая Н.И., Психодиагностика личности: Теория и практика: Учеб. пособие для студ. высш. учеб. Заведений, М., 2001.
6. Маслов С.И., Эмоционально-ценностное образование младших школьников /С.И. Маслов, Тула, Изд-во ТГПУ им. Л.Н. Толстого, 1999.
7. Страницы современной педагогики: диалог теории и практики (под ред. С.М. Годника)- Воронеж: ВОНПКРО, 1998.
8. Романовская З. И., Чтение и развитие младших школьников, М., 1992.
9. Ценности как основа социализации и воспитания, https://studme.org/1469111324110/pedagogika/tsennosti_kak_osnova_sotsializatsii_vospitaniya.
10. Михайлова Е., Педагогические условия формирования нравственных ценностей у младших школьников во внеурочной деятельности, http://www.dslib.net/obw-pedagogika/pedagogicheskie-uslovija-formirovanija-nravstvennyh-cennostej-u-mladshih-shkolnikov.html:
11. Формирование ценностных ориентаций младших школьников в процессе взаимодействия семьи и школы, https://works.doklad.ru/view/fRy-dUHq8io.html, Ценности младших школьников, https://cyberleninka.ru/article/n/tsennosti-mladshih-shkolnikov .